Աննա Դավթյան

Ground Zero

Զոն Մայուլլոյին

Դե, Սոն, արևն էլ է ընկնում ներս, երբ կոկորդիլոսը բացում է բերանը, ուրեմն այծը վախենալու բան չունի: Կոկորդիլոսը դանդաղ ջրի տակ, աչքը՝ բաց: Այծին փորագրել են հին ժայռերին, իսկ նա պիտի անցնի կոկորդիլոսի ջուրը: Որտե՞ղ է սա կատարվում: Այծը միշտ փորագրված է ժայռերին:

Կարող է լինել երկու բան՝ միաժամանակ կնճիթ, թևեր ու աչքեր ունեցող արարածներ, որ աստվածներ են, և միաժամանակ կնճիթ, թևեր ու աչքեր ունեցող արարածներ, որ սատանաներ են: Մի բանը, Սոն, երկո՞ւ բան: Ի՞նչը փչեց առաջինի մեջ, և ի՞նչը երկրորդի: Եվ ո՞վ անվանեց նրանց: Եվ որտե՞ղ է սա կատարվում:

Զոնը, առաջին անգամ Հայաստան գալիս, հայերեն գիտեր միայն ի՞նչ է սա: Ու երբ մանր ծաղիկների դաշտում տվեց իր հարցը ու լսեց մէխու, նրա սիրտը իրիկվա կակաչի պես սեղմվեց: Ո՞վ է անվանել մեղու, ու կասկածը մտավ Զոնի մարմնի մեջ: Զոնը դաշտում լացել էր: Մեռնեմ ջանին (Զոնին):

Ինձ թվում էր՝ ես հասկանում եմ, բայց հիմա ես անցնում եմ գետը՝ կնճիթից, թևերից ու աչքերից այս գետը, որ անվանել է պետք: Անվանել Ամերիկան: Ի՞նչ է սա: Եթե առաջին տեսակի արարածն է, ինչո՞ւ էր Զոնը դաշտում լացում, եթե երկրորդն է, ինչո՞ւ Զոնը վերադարձավ Ամերիկա: Նա Լոս Անջելեսում լավաշ կուտի, իսկ ես փորձում եմ անվանել նրա հայրենիքը, որ իմ ամեն օրվա անցածն ուրիշ գետ չլինի, որովհետև դժվար է անցնել անուն չունեցող գետերն

առհասարակ:

Մէխու:

Մանհեթեն –

Ինքն իր մեջ փոքրիկ, լուսառատ երկիր, բարձր ակվարիումներ ու էն տեսակ մարդիկ, որ ես կասկածում եմ, թե միայնակ են, մինչդեռ այս ամենն այնքան գեղեցիկ է թվում միաժամանակ: Հիմա ամեն ինչ, աշխարհը, աշխարհից դուրսուներս առարկաները, աշխարհի բոլոր մարդիկ (նույնիսկ նրանք, որ այստեղ չեն) իրար հետ խառնված, անհամասեռ գնդով գլորվում են փողոցներով, քաղաքը գլորվում է ինքն իր մեջ, քաղաքի գոտկատեղից վերև երկինքն է, երկնքի մեջ գլորվում է մարդը:

Լուսանկարը, որ ցույց է տալիս երկնաքերից ցած նետվածին, երբ ինքնաթիռները շենքերի մեջ դեռ վառվում էին, հետապնդում է ինձ, ու սիրտս կծկվում ու մարում է այս քաղաքում: Նա իջնում է գլխիվայր, բարձր շենքին զուգահեռ ու կիպ, թեթևության ամբողջ ահռելի ծանրությամբ, պարզ, սպիտակ վերնաշապիկ, սև կոշիկներ, որ ամենաշա՛տը չեն համընկնում ցած նետվելու որոշման հետ, մի ծունկը թեթև ծալած, ինչպես պարողը, ու տրված իր որոշած անկման արագությանը, անդառնալիությանն ու լռությանը: Նրա անկման մեջ կա միայն թռնելու, ոչ մեռնելու որոշումը, ու որ այդ երախն անակնկալ կբացվի նրա առջև, ջղայնացնում է ինձ, ու զարմացնում է բացառության անհնարինությունը: Ինչպե՞ս անվանել լուսառատ այս երկիրը: Երկնաքերի գլխի՞ց նայել, թե՞ գետնի տակերից:

Ռուս տատիկի հետևում պիտի փռվի անծայրածիր տափաստանը՝ կեչիներով, պիտի լինի ջրհորն ու բաց դեղին եկեղեցին, մի տեղ պիտի թրթռա ձիու պոչն, ու երևա սահնակը, կանացի մի ձայն պիտի ծիծաղի: Նա պատկանում է այս տեսարանին, ինչպես կողքին նստած արաբը՝ շոգ փողոցի պարապությանը, մուգ ստվերներին: Նրա ուսերին ձեռագործ շալ է, ու աչքերը, որ սովոր են նայելու հեռու հորիզոնին, զբաղված փողոցում չեն կարողանում գտնել կանգառը: Ու եթե նա տխուր չլիներ, ու եթե նա համոզեր, որ այս տեսարանը, որում մենք հանդիպել ենք, ճիշտ է, ես կհավատայի նրան:

Ո՞ր մեկիս համար է ավելի հեշտ կամ ավելի դժվար: Զոնը քթին օղ ունի ու հագնում է հայ զինվորի կանաչ բաճկոն: Նա իր հայրենիքի համար չի ծառայել, որովհետև դաշտում լացող Զոնը մարդու վրա կրակել չէր կարողանա: Ի՞նչ էր գտել Զոնը դաշտում, կարո՞ղ եմ ես կորցնել Զոնի գտածը:

47-րդ փողոցի վրա թանկարժեք զարդեր են վաճառում գավառական փայլուն խանութներում, ու մեծ քթերով տղաներն անթերի անգլերենով են հրավիրում գնումների: Բայց մայթի լույսի մեջ սև մարդը ձեռքի գլխարկի մեջ մի բան էր շոշափում, որ գլխարկի մեջ հայտնված կլիներ խառախուռա փողոցներից, ես սպասում էի, թե գլխարկից ինչ կհանի, հանածից ոնց կուրախանա, ու հա սպասում էի՝ տեսնելու նրա ուրախությունը, ու նա գլխարկի մեջ տնտղում էր իր գտածը, ուրիշի կորցրածը: Ու որ նա պոչից բռնած հանեց սիրուն, մոխրագույն դնչիկը, ադամանդի պես պսպղուն սև աչքերը, փոքրիկ թաթիկը ու հարցրեց “Do you want?”, ասեցի “I do”, բայց ո՞ւր տանեմ ամանաթ մուկը: Ո՞ւմ տուն: Ես տուն չունեմ: Ես նրա տանն եմ: Նախշուն արև քարս, թանկս, ո՞ւր ես բարձրացել քո ծուռումուռ ծակերից, գնա մամայիդ մոտ: Ինչքան տգեղ էին էդ ճոխ քարերով լիացած խանութները:

Մուրացկանները՝ մեծ ու ծանր վագոնի մեջ՝ լիքը ուժասպառ մարդկանցով, որ մետրոյում կարդում են միայն շուտ տեղ հասնելու համար ու աչքերը գրքերից չկտրելով՝ արհամարհական փող են տալիս, իսկ ես տալիս եմ ուղիղ նայող աչքերս՝ արհամարհելով նրանց գրքերը ու ժպտում եմ՝ մենակ չթողնելու համար:

Տղան զզզված ձեռնոցներով բռնած կարդում է զզզված աստվածաշունչ, ու մի քանի տողից գլուխը նորից է սկսում դառնալ, խփվում է մետրոյի պատուհաններին, որ հոսում են մթան ու դատարկության միջով, ինչպես մաքրող սև գետ, ցնցվում է, հետ է խփվում, դեմքը ժպտում է, հավաքվում է, բացվում է, քթանցքները կպնում են իրար, հեռանում են, ձեռնոցներով բռնած աստվածաշունչը հանգիստ գոգին է: Լավ է արդեն, նորից է կարդում, մի քանի լույսեր անցան, մի քանի տող, ու գլուխը նորից սկսում է դառնալ… հետո էլի մի քանի տող…: Ես չեմ նայում, բայց տեսնում եմ, ես հույս ունեմ, որ նա չի հոգնել: Նա վագոն մտած բոլոր մուրացկաններին փող տվեց ու ժպտաց մի կերպ:

Երազում տեսնում եմ լույսերով ծեփված այնքան բարձր շենքեր ու կամուրջներ, որ թվում է՝ օդում գծված են ինչ-որ անհայտ մեքենաներով՝ որպես երկնքին անծանոթ զարդանախշեր: Նույնիսկ երազում սարսափելի է: Երանի աշխարհում գոյություն չունենար այն լուսանկարը:

Բայց ինչպե՞ս անվանել այս երկիրը, բարձրությամբ չափվող այս քաղաքը, որտեղ առավոտներ չեն լինում: Առավոտը հեռավոր թարմ տեսարանների, մանր ծաղիկների դաշտի, հորիզոնի լեռների հատկանիշն է, այնքան հստակ ու խիտ, որ օդը ծնգում է, ու ժայռերը, որոնց վրա կենդանիներ են փորագրված, կանգնում են նորության նման ու ապագայի շունչ են արձակում: Ամեն օրվա մեջ այնպես շատ ու մեծ առավոտ է լինում, ու քեզ այնքան բան է նայում ապագայից: Այդ առավոտների մեջ ինչքա՜ն բան է գեղեցիկ կառուցվում:

Ես ճանաչում եմ լուսառատ այս երկիրը, այս ափն ինձ օտար չէ, որովհետև աշխարհը վաղուց իմ մեջ է, ու ոչինչ նոր չէ ինձ համար, այս ճոխությունն ու թշվառությունը եղել են իմ մեջ՝ հանդիպումից առաջ, ու ես չեմ նայում լցվողի աչքերով. մենք իրար ենք նայում: Ես կուզեի ավելի շատ լույսերից խոսել (խաբուսիկ), բայց նա ինձ ստիպում է պատմել բաներ, որ չեն պատմվել: Նա ազնվորեն թախծում է, ես միայն նրա թախիծով եմ լցվում:

Իսկ Ալեքը պատմեց, որ ուզում էր քարանձավ առնել: Եթե ճգնավոր ես այստեղ, քարանձավիդ համար պիտի պայքարես: Ալեքը պատմեց, որ ճգնավոր դառնալու սիրտ չունեցավ: Նա ճգնավորի պես է նկարում: Ժուժկալ ու հեռու: Քո մոտից, բայց հեռու: Նա լսում էր: Քիչ խոսեց:

Սոն, ես ամեն ինչ չեմ պատմում, բայց դու ամեն ինչ կարդա: Ու արագ: Ու առանց շտապելու: Ես չեմ ուզում շատ բառեր ուզելդ: Ինչպե՞ս կարող է շքեղության մեջ գեղեցկություն լինել: Բայց նաև ինչպե՞ս կարող է շքեղության մեջ գեղեցկություն չլինել: Զարմանալի կաշվով կոկորդիլո՞սը, թե՞ երկար ոտքերով այծը: Բայց եթե երկուսն էլ միաժամանակ նույն գետում, ապա ո՞ր գետում, որ սպիտակ պայծառությամբ կուրացնո՞ւմ է, թե՞ գետում, որն անցար, ուրեմն Լեդան անցար: Ալեքի նկարներից մեկը քարանձավի անկյունում կախված կախիչներն է ցույց տալիս ու սպիտակ քուրձե պատերը՝ բնական կրով լվացված: Ինչքան շատ բաներ պատմեցի, մինչդեռ ուզում էի քիչը:

Գրանիշ հանդես